ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2024թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կոմունալ տնտեսության վարչություն» գլխի՝

ա. 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1, 122, 000

»,

բ. «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «27» և «28» թվերը փոխարինել համապատասխանաբար «8,632,600» և «9,193, 600» թվերով:

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «786.0», «262,639,445» թվերը փոխարինել համապատասխանաբար «787.0», «263,200,445» թվերով.

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2315.0», «692,558,845» թվերը փոխարինել «2316.0», «693,119,845» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունն (այսուհետ՝ Վարչություն) ունի ընդհանուր 27 հաստիք, ներառյալ՝ Վարչության պետի, Վարչության պետի մեկ տեղակալի, գործավարի հաստիքները: Վարչության կազմում գործում են երեք բաժիններ: Վարչությունը կոմունալ տնտեսության բնագավառում՝ իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների ապահովմանն ուղղությամբ իրականացնում է մեծածավալ աշխատանքներ:

Կոմունալ տնտեսության բնագավառը բազմաճյուղ է, կարևոր, հանրության համար կենսական նշանակություն ունեցող և պահանջում է առավել պատասխանատվություն և պատշաճ հսկողություն այդ ոլորտում իրականացվող աշխատանքները պատշաճ, արդյունավետ կազմակերպելու համար: Հաշվի առնելով, որ Վարչության կանոնադրությամբ նախատեսված գործառույթների ապահովման համակարգման և հսկողության, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ հսկողության, մեթոդական ցուցումներ տրամադրելու գործառույթը հիմնականում իրականացնում է Վարչության մեկ տեղակալը, որի ծանրաբեռնվածությունը տեսականորեն հնարավորություն չի տալիս այն իրականացնել կարճ ժամկետներում և առավել արդյունավետ, անհրաժեշտություն է առաջացել Վարչությունը համալրել ևս մեկ տեղակալի հաստիքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ